Ի ՌՃԽԷ (1698) Ազգային թուաբերութեան մերում գրեալ է սոյն այս ազգաբանութիւն ընդ պատմութեան Հռոմէական կայսերաց 'ի նոյն վարդապետէն Մինասայ:

Զայնու միջոցաւ էր Պատրիարգ Ս. Երուսաղեմի Մինաս անուն ոմն վարդապետ Համդեցի (Տիկրանակերտացի), որ թուի մեզ՝ նոյնն հեղինակ գործոյս այսորիկ՝ եթէ չգտանէր այլ ոք նովին անուամբ վարդապետ Համդեցի, որ չէ՛ք յիշատակեալ 'ի պատմութիւնս և 'ի յիշատակարանս՝ ոչ յառաջ և ոչ յետոյ:

Իսկ օրինակ այսր Ազգաբանութեանս մի միայն գտանի 'ի մատենադարանի Ս. Աթոռոյս Կաթուղիկէ Էջմիածնի, և այն՝ ունի զյոլով գրչախալս և զտառասխալս յանուանս և 'ի շարագրութիւնս: Այլ թէ ե՞րբ, ո՞ւր և յումմէ՞ իցէ օրինակեալ, չէ՛ք 'ի միջի ծանօթութիւն կամ յիշատակարան ինչ:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան